

ՏՈՄԱՐԱՐԻ ԵՒ ՏՕՆԱՑՈՅՑ

ՏՈՄԱՐ ԵՒ ՏՕՆԱՑՈՅՑ

«Սիոն»-ի ներկայ թիւով կը սկսինք հրատարակել ռահեկան ուսումնասիրութիւն մը մեր եկեղեցական Տոմարի եւ Տօնացոյցի մասին: Հեղինակը՝ Գիւս Քննյ. Աղանեանց, ապրած եւ քահանայադուրած է Թիֆլիսի մէջ, Մակար Կրդ. Ի օրով: Ան ծանօթ է իբրեւ ուսուցիչ եւ ուսումնասիրող եկեղեցական գիտութիւններու, մասնաւորաբար իբրեւ մին այն եկեղեցականներէն, որոնք սիրած են ժողովրդային եւ պարզ լեզուով բացատրել կրօնի եւ ծիսակատարութիւններու խորհուրդները հաւատացեալ բազմութեան: Իր ուսումնասիրութիւններուն նիւթը դասաւորելու եւ ներկայացնելու հանելի ձեւը կը պահէ կենդանի հետաքրքրականութիւն մը, հակառակ անոնց հնուրբան: Կը յուսանք որ ներկայ հրատարակութեամբ, «Սիոն»-ը օգտակար հանգիստացած պիտի ըլլայ եկեղեցագիտական հետաքրքրութիւն ունեցող իր ընթերցողներուն:

ԽՄԲ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՏՈՄԱՐ

Ա.

ՏՈՄԱՐ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Տոմար կամ Ժամանակագրութիւն նշանակում է Ժամանակի վերայ տեղեկութիւն կամ Ժամանակ չափելու արուեստ: Տոմարագրութիւնը այն գրութիւնն է, որ ցոյց է տալիս Ժամանակի այլեայլ փոփոխութիւնները:

Բ.

ՏՈՄԱՐԻ ՍԿԻԶՐԸ

Տոմարագրութեան ուսումը շատ հին է եւ ամէն հին ազգեր ունեցել են տոմարի գործածութիւնը միմեանցից շատ կամ քիչ տարբերութեամբ, սակայն պատմութիւնից ճիշդ չէ իմացում, թէ ե՞րբ եւ ո՞րտեղ է

սկիզբն առել դա: Հին ազգերից՝ Հայերի, Բաբելացիների, Եգիպտացիների, Մարաց, Պարսիկների, Յոնիների, Հռոմայիցիների եւ Հրեաների մէջ շատ վաղուց երևում է տոմարի գործածութիւնը միմեանցից տարբեր կերպով, բայց թէ սոցանից ո՞րն է առաջ սկսել Ժամանակը չափել՝ յայտնի չէ:

Ամենից հին տեղեկութիւնը, որ ցոյց է տալիս տոմարի գործածութիւնը, մենք գտնում ենք Մ. Կրքի մէջ, որից երևում է թէ տոմարի գործածութիւնը Հրէից մէջ սկիզբն է առել Մովսէս մարգարէի Ժամանակ (1487 տարի Քրիստոսից առաջ). երբ նա պատուիրեց Հրէից Զատիկ կամ Պատեքի տօնը կատարել, այն է նոցա Եգիպտոսից զուրս գալու աշատութեան յիշատակը: Մովսէսից՝ սկզբնաւորած Հրէական տոմարը նորանից 600 տարի յետոյ Եգիպտոսը նորոգեց:

Գ.

ՑՈՒԼԵԱՆ ՏՈՄԱՐ

Հռոմայիցուց տոմարը եւ թուականը սկսուեցաւ Հռոմէ քաղաքի շինութեան սկզբնաւորութեան օրից, Քրիստոսից 753 տարի առաջ. Հռոմուլոսի ձեռքով: Նոցա տարին տասն ամիս էր, այն է. —

1. Մարտ	31 օր
2. Ապրիլ	30 օր
3. Մայիս	31 օր
4. Կուարտիլիս	30 օր
5. Կուինտիլիս	31 օր
6. Սեքստիլիս	30 օր
7. Սեպտեմբեր	30 օր
8. Հոկտեմբեր	31 օր
9. Նոյեմբեր	30 օր
10. Դեկտեմբեր	30 օր

Ընդ ամենն 304 օր:

Հռոմուլոսի յաջորդ Նումա Պոմպիլիոսը տեսաւ որ Հռոմուլոսի տարին թէ՛ լուսնական եւ թէ՛ արեգակնային տարուց պակաս է, ուստի եւ սխալ. վասն որոյ նա տոմարը կարգի դնելով՝ սահմանեց որ լուսնական տարին 355 օր ունենայ, բաժանուած տասներկու ամիս վերայ, հին տասն ամիսների վերայ աւելացնելով երկու նոր ամիսներ՝ Յուլուար եւ Փետրուար:

Բայց զօրանով էլ չուղղուեցաւ տոմարը:

ըը, որովհետև լուսնական տարին ոչ թէ ամբողջ 355 օր էր կազմում, այլ 354. ուստի այս սխալը տարեց տարի աճելով չփոթում էր հոսովմական տօների կատարման միջոցները, և այդ ժամանակից մինչև Յուլիոս Կայսրը, այն է մօտ 650 տարուայ ընթացքում, այդ տարբերությունը 67 օրի չափ եղավ:

Յուլիոս Կայսրը նկատեց այդ մեծ անշարժարկությունը և Եփպատոսից կանչելով Սողիգէն Աղեքսանդրացի անուանի աստղագետին, նորան յանձնեց որ կարգի դնէ խանգարուած տոմարը: Նա այսպէս ուղեց տոմարը:

Նախ՝ որովհետև տարեգլուխը իսկական ժամանակից 67 օր հեռացել էր, այդ տարին 12ի փոխանակ 15 ամիս դրին, որ եղավ 445 օր, որպէսզի տարեգլուխը 67 օր առաջ անցնէ և հետեւեալ տարին իւր ժամանակին գայ:

Երկրորդ՝ նոքա թողին լուսնական տարին, որ մինչև այդ ժամանակ գործ էր դրուում, և ընդունեցին Եփպատացւոց գործածած արեգակնային տարին, որ ունէր 365 օր ու 6 ամբողջ ժամ(*) և որչոցնէն որ երեք տարին 365 օրից բաղկացած համարեն, իսկ հետեւեալ չորրորդ տարին չորս անգամ աւելացած 6 ժամերի փոխարէն մի օր աւելացնելով՝ 366 օրից. առաջին երեք տարիները կոչեցին հասարակ տարի, իսկ չորրորդ տարին՝ ճաճանգ: Տարուայ այդ մի օրուան տարբերությունը որոշուեցաւ փետրուար ամսին անել, որը հասարակ երեք տարիները 28 օրան որ համարել, իսկ նահանջ տարին՝ 29 օր:

Յուլեան տոմարով ամիսները հետեւեալ կերպով բաժանուեցան. —

1. Յունուար 31 օր
2. Փետրուար 28 օր (29 օր նահանջին)
3. Մարտ 31 օր
4. Ապրիլ 30 օր
5. Մայիս 31 օր
6. Յունիս 30 օր (Կուարտիլիս ամիսը, ի պատիւ Յունիոս Բրուտոսի, կոչեցին Յունիս)

7. Յուլիս 31 օր (Կուինտիլիս ամիսը, ի պատիւ Յուլիոս Կայսեր, կոչեցին Յուլիս)
8. Օգոստոս 31 օր (Սեքստիլիս ամիսը, ի պատիւ Օգոստոս Կայսեր, կոչեցին Օգոստոս)
9. Սեպտեմբեր 30 օր
10. Հոկտեմբեր 31 օր
11. Նոյեմբեր 30 օր
12. Դեկտեմբեր 31 օր

Յուլիոսի այս նոր կարգադրութիւնը կոչուեցաւ Յուլեան ճամար և սկսաւ գործածուիլ Հռոմի շինությունից 709 տարի յետոյ, այսինքն Քրիստոսից 45 տարի առաջ, Յունուարի մէկից:

Յուլեան տոմարը մինչև այժմ գործ է դրուում ինչպէս շատ մի ազգերի՝ այնպէս էլ մեր մէջ:

Գ.

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏՈՄԱՐ

Թէպէտ Յուլեան տոմարը տարին ընդունեց 365 օր և 6 ժամ, բայց մենք գիտենք որ տարին ճիշդ 365 օր և 6 ժամ չունի, այլ մօտ 11 րոպէ և 10 մանրերկրորդ դրանից պակաս. իսկ այդ աւելորդ րոպէները և մանրերկրորդները ժամանակի ընթացքում աճելով՝ մօտ 129 տարուայ մէջ մէկ օր են կազմում:

Այդ տարբերությունը Նիկիոյ ժողովից, որ գումարուեցաւ Փրկչի 325 թուին, մինչև 1582 թիւը, այն է 1257 տարուայ ընթացքում, գառել էր 10 օր(*), այսինքն Յունեան տոմարը երկրիս ընթացքից յետ էր ձնացել 10 օրով. այնպէս որ գարնանային կամ աշնանային գիշերահաւասարներին 10 օր պակաս՝ արդէն գիշերահաւասար էր, և այդպիսով Զատիկ տօնը փոխանակ Նիկիոյ Ս. Ժողովի որոշածի պէս գարնանային գիշերահաւասարից յետոյ պատահող լուսնի լրման անմիջապէս հետեւող կիրակի օրը գալու՝ տոսն օր առաջ պատահեցաւ. գարնանային գիշերահաւասարն արդ հաշուով

(*) իսկապէս, արեգակնային տարին ունի 365 օր, 5 ժամ, 48 րոպէ և 30 մանրերկրորդ:

(*) եթէ 11 րոպէն և 10 մանրերկրորդը 1257 անգամ վերցնենք՝ զրեթէ 10 օր կը ստանանք:

Մարտի 11ին էր, փոխանակ Մարտի 21ին լինելու: Ուրեմի Ս. Ջապկի տունը խախտվեցաւ:

1582 թուին Հոռովի Գրիգոր ԺԻ՛. պապը ուղեց ուղղել տոմարի այս սխալը և կարգադրեց որ տոմարների մէջ Հոկտեմբերի 4ից յետոյ՝ փոխանակ հաշուելու 5՝ դինն Հոկտեմբերի 15. որով 10 օրով յետ մնացած տարին հասաւ երկրիս բնական ընթացքին: Այս ուղղած տոմարը կոչեցաւ Գրիգորեան կամ ճորտ տոմար:

Որովհետեւ 1582 թուին բոլոր Կաթողիկէ ազգերը Գրիգորեան տոմարով իրանց թուականին 10 օր աւելացրին, իսկ մերը մնաց անփոփոխ, այդ պատճառով 1700 թուին, որ Գրիգորեան տոմարով հասարակ տարի էր իսկ մեր հաշուով՝ նահանջ, զանազանութիւնը 11 օր եղաւ. միննուրի հաշուով 1800 թուին եղաւ 12 օր, իսկ աստղիկայ 1900 թուին պիտի լինի 13 օր(*):

Յուլիան տոմարով բացի 4 տարուց մէկը նահանջ լինելուց՝ նաեւ ամէն դարապիտիս նահանջ էր. բայց որովհետեւ վերը յիշուած աւելորդ րոպէները 400 տարուայ մէջ 3 օր և մօտ 3 ժամ էին կազմում, ուստի, այդ սխալը նորից չկրկնուելու համար, Գրիգոր պապը սահմանեց որ չորս դարերից երեք դարապիտիսները հասարակ տարի լինին, իսկ չորրորդը միայն նահանջ համարուի. օրինակ՝ 1700ը, 1800ը և 1900ը՝ հասարակ, իսկ 2000ը՝ նահանջ: Սորա հետեանքը այն էլ լինի, որ 400 տարուայ վերայ փոխանակ 100 նահանջ օր աւելացնելու՝ միայն 97 օր կ'աւելանայ և տոմարի ընթացքը կը հաւասարուի երկրիս ընթացքին:

Թէպէտ այս էլ պէտք է առնել, որ այս եւս շատ ճիշդ չէ, որովհետեւ տարին օրերով չէ չափուում ամենամէրջ կերպով: Աւելի ճիշդ հաշու կազմել է Մէդլեր աստղագէտը. նա առաջարկում է որ 128 Յուլիան տարիներից մի նահանջ տարին հաշուենք հասարակ, այն է 365 օրով. դրանով 128 տարուով 31 նահանջ կը լինի և 97 հասարակ, հետեւապէս մի տարին կ'ուշենայ 365,24218 օր. այս կերպ սխալը կը լինի 0,00002, այսինքն՝ միմիայն 50,000 տարումը մի օր:

(*) Սոյն ուսումնասիրութիւնը լոյս տեսած է 1890ին, երբ Հին և Նոր տոմարների տարբերութիւնը 12 օր էր տակաւին (Գ. Խ.):

Գրիգորեան տոմարը ընդունեցին Ս. Բ. պական տէրութիւններ, իսկ հայերն ու յուսնոգաւան տէրութիւններ չընդունեցին:

Ե.

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Ա. — ՀԱՅԿԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ

Տոմարի ուսումը Հայոց մէջ ևս շատ հին է, բայց մեր պատմութիւնը որոշ չէ աւանդում մեզ թէ ե՛րբ է նա սկսուած. սակայն մեր պատմագիրները և տոմարագիրները ասում են, որ Հայոց թուականը սկիզբն է առնել մեր Հայկ նահապետից, մեզանից 4381 տարի աստղ(*)), Նաւասարդի 1ին, այն է Օգոստոսի 11ին. այսինքն այն օրից, երբ Հայկը Բէլլին սպանելով՝ հրամայեց հայերին որ այդ օրը տարեգլուխ համարուի և ամէն տարի հայերի այդ անկախութեան տարեգարձը տննուի. Այս թուականը կոչուեցաւ քաղաքական տարի, Հայկայ թուական կամ Հայկայ օրան: Աւելի վաղ տարին ունէր 12 ամիս 30ական օրով, որոնք կազմում էին 360 օր. այս թիւը 365 օրուան հաւասարեցնելու համար, ինչպէս երեւում է, յետոյ աւելացրել են նաեւ մի նոր ամիս — Աւելից անունով — որ ուշե՛ր 5 օր. այդպիսով Հայկայ թուականը 365 օր ունէր, ուրիշն իսկական տարուց մօտ 6 ժամ պակաս. և այդ պատճառով այդ տարին միշտ շարժական էր, որովհետեւ տարին 6 ժամ յետ էր մնում և մի օրերից տօն ամէն տարի միեւնոյն օրը չէր կարող գալ, ջանի որ այդ 6 ժամերը հաւաքուէլով, մի ժամանակ կարող էր պատահել որ Նաւասարդը զարգարունքին կամ մի ուրիշ ժամանակ: Ահա այդ պատճառով ենթադրում է, որ հայերը իրանց կրօնական հանգէները որոշեալ օրերին կատարելու համար ունէին նաեւ հաստատուն և անշարժ տարի, որ Սրբազան էր կոչուում և որ սկսւում էր Արեգ (Մարտ) ամսից, զարնահամարից(**):

ԳԻԻՏ ՔԶՆՅ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Շարունակելի՛ 1)

(*) Ներկայիս, այս թուականը հասած է 4453ի:

(**) Հետագային, այս անպատեւութեան առաջը առնելու համար, նահանջ տարիներուն Աւելեաց ամսին տրուած է 6 օր (Գ. Խ.):